Coca-Cola Hellenic Bottling Company S.A.
9 Fragoklissias Str., 151 25 Maroussi, Athens, Greece
T +30 210 6183100
F +30 210 6195514
www.coca-colahellenic.com

Կլիմայի փոփոխության դեմ պայքարի քաղաքականությունը

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը ձգտում է սահմանափակել իր ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա և իր ողջ գործունեությունը կայուն կերպով իրականացնել: Մենք համարում ենք, որ մասնավոր հատվածը առանցքային դերակատարություն պիտի ունենա այսօրվա կլիմայական մարտահրավերներին կայուն լուծումներ գտնելու գործում:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության գործունեության հետևանքով ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներն հիմնականում շշալցնող գործարանների աշխատանքի և շարժակազմի կողմից էներգիայի օգտագործման արդյունք են: Անուղղակի արտանետումների աղբյուրները հումքն է (բաղադրիչներ և փաթեթավորում) և սառեցնող սարքավորումները:

Մեր բնապահպանական քաղաքականությանը համահունչ, մենք

- **կկրճատենք** մեր գործունեության ընթացքում սպառվող էներգիայի քանակը:
- **կկիրառենք** այլընտրանքային կամ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներ, որոնք մեր ձեռնարկությունները կապահովեն լրացուցիչ էներգիայով: Սրա օրինակներից է շշալցման գործարանների կողքին ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության կայաններ կառուցելու մեր ծրագիրը:
- **կներգրավենք** մեր շահառուներին կլիմայի փոփոխության դեմ պայքարում, օրինակ, աշխատելով մատակարարների հետ փաթեթավորման նյութերում ածխածնի պարունակության և մեր սառեցնող սարքավորումների ածխածնային արտահոսքի նվազեցման ուղղությամբ:

Coca-Cola Hellenic Bottling Company S.A.
9 Fragoklissias Str., 151 25 Maroussi, Athens, Greece
T +30 210 6183100
F +30 210 6195514
www.coca-colahellenic.com

- **կզեկուցենք** ջերմոցային գազերի մեր արտանետումների, թիրախների, արդյունքների և գործունեության մասին հրապարակավ և Ջերմոցային գազերի արտանետումների արձանագրությանը համապատասխան:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես պարտավորվում են հավատարիմ մնալ Կլիմայի փոփոխության դեմ պայքարի սույն քաղաքականությունը, որը ճանաչվել և հաստատվել է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կոմիտեի կողմից: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում այս ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Դիմիտրիս Լոյիս
Գլխավոր գործադիր տնօրեն